ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 772 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստանի Ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից Միջազգային պարալիմպիկ կոմիտեի հետ կնքված դրամաշնորհային համաձայնագրի շրջանակում Հայաստանում անցկացվելիք տեղական և միջազգային առաջնությունների ու պարա ծանրամարտի (պարա փաուերլիֆթինգի) հավաքականի և ակումբների մարզիկների պարապմունքների կազմակերպման նպատակով ձեռք բերված մարզագույքի (ցանկը՝ համաձայն հավելվածի, 11,375.25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 604,360 դրամ և այլ ծախսերը 318 եվրո, մաքսային ձևակերպումները կատարվելու են Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչությունում) ներմուծման և «Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանն ու ««Ֆյունիկ» Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց միություն»

բարեգործական հասարակական կազմակերպությանն անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու անհատույց հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ